ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆՈՎ

Նագասակիից Կօբէ անցանք ճապոնական «Nigo-Maru» շոգենաւով, որ մշտական երթեւեկ ունի Կօբէի, Նագասակիի եւ չինական Նիու-Զանգ նաւահանգստի մէջ:

Նաւը փոքր էր, մաքուր ու կոկիկ: Ճաշի սրահում առաստաղից կախուած էր ահագին պանկերը, այսինքն պաստառի մի լայն կտոր, որ անդադար հովհարելով զով էր տալիս սեղանակիցներին:

Այդ յարմարութիւնը դեռ չի մտած ռուսաց կամաւոր ֆլոտի շոգենաւերի մէջ, ուր ճամփորդները մինչեւ այժմ սաստիկ չարչարւում են տօթից, տրօպիկներն անցնելիս:

«Գրեթէ բոլոր նաւաստիներն ու նաւապետները բացառապէս ճապոնացի են: Ճապոնը եւրոպական քաղաքակրթութեան նորութիւնները իւրացնելուց յետոյ ամեն կերպ աշխատում է իր ձեռնարկութիւններից հեռու պահէ եւրոպացիներին:

Ճապոնացիք նախ ձգտում են գործին տէր դառնալ, իրանք իրանց ոտին կանգնել, եւ յետոյ արդէն ճարպիկ եւ աննկատելի կերպով հետզհետէ իրանց եւրոպացի ուսուցիչներին փոխանակում են տեղացիներով: Եւ սրանով էլ խուսափում են նրանք բազմաթիւ զեղծումներից, թէեւ ի հարկէ գրգռում են եւրոպացիների դժգոհութիւնը:

Մեր շոգենաւի հասարակութիւնը մեծ չէր, բայց երփներանգ էր. եւրոպական մի քանի ազգութիւններ ունէին այդտեղ իրանց ներկայացուցիչները, իսկ աւելի մեծ մասը ճապոնացի էր, պաշտօնեայ կամ զինուորական:

Վերջինների թւում մասնաւորապէս խիստ տիպիկ էր մի գնդապետ, որ ամբողջ օրերով փռուած էր մէջքին long-chaise-ի